Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Учебник
Рабочей медицины
1879

Lmq
1106

~~N 387.~~

~~437~~
~~N 355~~
314

20 APR 2006
10 NOV 2011
355
84
Ս-84
ստ.
1937

ԲՈՒՆԻ

ԱՄՈՒԱՆՈՒԹԻՒՆ

ЛАЗАРЕВСКІЙ ИНСТИТУТЪ
УЧЕНИЧЕСКАЯ БИБЛІОТЕКА
ВОСТОЧНЫХЪ ЯЗЫКОВЪ

ԳՈՐՇ ՄՈԼԻԷՐԻ

ԿՈՄԵԴԻԱ ՄԻԿ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ.

Թարգմանութիւն

Գ. Ղմշկեանի

ԹԻՖԼԻՍ

Յովհաննէս Մարտիրոսեանցի տպարան

1879

17 DEC 2013

Дозволено цензурою, Тифлисъ, 8 Іюля 1879

Ф 1103 (5096 38)
1106-2014

Тип. И. Мартиросіанца. на Орбеліан. улицѣ, д. № 5

ԲՈՆԻ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ

ԱՆՁԻՆՔ

ԶԳԱՆԱՐԷԼ, 53 տարեկան։ (Ս. Սալեանց։)
ԺԵՐՈՆԻՄՈ, նորա բարեկամը։ (Կ. Շահբուզաղեանց։)
ՊԱՆԿՐԱՍ, վերկոտոյ։ (Գ. Զմշկեան։)
ՄԱՐՖՈՒՐԻՈՍ, վերկոտոյ։ (Գ. Տէր Դաւթեանց։)
ԴՈՐԻՄԷՆ, Զգանարէլի հարմնացումն։ (Տ. Ս. Զմշկեան։)
ԱԼԿԱՆՏՈՐ, որա հայրը։ (Կ. Շահբուզաղեանց։)
ԼԻԿԱՍ, Դորիմէնի սիրահարը։ (Ա. Սարգսեանց։)
ԱԼՍԻԴԱՍ, Մէկանտարի որդին։ (Գ. Զմշկեան։)
ԵՐԿՈՒ ԳՆՉՈՒ ԿԱՆԱՅՔ։

Տեսարանը ներկայացնում է հրապարակ։

ՏԵՍԻԼ Ա.

ԶԳԱՆԱՐԷԼ, *խօսելով իւր տան մէջ եղած մարդկանց հետ.*

Եւ իսկոյն կը դառնամ։ Լա՛ւ նայեցէք տանը, կարգի բերէք ամէն բան ինչպէս հարկաւոր է։ Եթէ փող բերեն, ուղարկեցէք իմ եռևից, ես պարոն Ժերոնիմոյի մօտ կը լինիմ, իսկ եթէ փող ուզելու գան, առացէք որ տանը չեմ և ամբողջ օրը չեմ վերադառնալ։

ՏԵՍԻԼ Բ.

ԶԳԱՆԱՐԷԼ ԵՒ ԺԵՐՈՆԻՄՈ

ԺԵՐՈՆԻՄՈ, լսելով Զգանարէլի վերջին խօսքերը. Խելացի կարդադրութիւն է։

ԶԳԱՆԱՐԷԼ.

Ահ, պարոն Ժերոնիմո, լաւ պատահեցանք, այս րոպէին ձեզ տեսնելու էի գնում։

ԺԵՐՈՆԻՄՈ

Ի՞նչ բանի համար, պարոն։

ԶԳԱՆԱՐԷԼ.

Հաղորդելու ձեզ մի բան, որ մտքումս դրել եմ և որի մասին կամենումեմ ձեր կարծիքը իմանալ։

ԺԵՐՈՆԻՄՈ

Գլխիս վրայ։ Շատ ուրախ եմ որ պատահեցանք. մենք կարող ենք ազատ խօսիլ այստեղ։

ԶԳԱՆԱՐԷԼ.

Ինձ այնպիսի մի նշանաւոր առաջարկութիւն են արել որ առանց բարեկամի հետ խորհրդակցելու անկարելի է ընդունել։

ԺԵՐՈՆԻՄՈ

Ցաւուկ պարտաւորումէք ինձ ձեր ցոյց տուած վստահութեամբը. ասացէք, խնդրեմ, բանը ինչումն է։

ԶԳԱՆԱՐԷԼ.

Նախ և առաջ զգուշացնումեմ ձեզ որ ձեր կարծիքը անկեղծօրէն յայտնէք։

ԺԵՐՈՆԻՄՈ

Ուրախութեամբ, եթէ այդպէս էք կամենում։

ԶԳԱՆԱՐԷԼ.

Նորանից վատ բան չկայ երբ բարեկամը բարեկամից իւր անկեղծ կարծիքը ծածկումէ։

ԺԵՐՈՆԻՄՈ

Իրաւունք ունիք։

ԶԳԱՆԱՐԷԼ.

Այն ևս պէտք է ասած, որ մեր ժամանակում դըժուար է ճշմարիտ բարեկամ ունենալ։

ԺԵՐՈՆԻՄՈ

Ճշմարիտ է։

ԶԳԱՆԱՐԷԼ.

Խոստացէք ինձ ուրեմն, պարոն Ժերոնիմո, որ ամենայն անկեղծութեամբ կը յայտնէք ձեր միտքը։

ԺԵՐՈՆԻՄՈ

Խոստանում եմ։

ԶԳԱՆԱՐԷԼ.

Տուէք ինձ ձեր ազնիւ խօսքը։

ԺԵՐՈՆԻՄՈ

Պատուաւոր բարեկամի խօսք։ Միայն ասացէք թէ բանը ինչումն է։

ԶԳԱՆԱՐԷԼ.

Բանը նորանումն է, որ ես ուզում եմ իմանալ ձեզանից թէ լաւ կ'անէի արդեօք եթէ պսակուէի։

ԺԵՐՈՆԻՄՈ

Ո՞վ դո՞ւք։

ԶԳԱՆԱՐԵԼ.

Այո՛, եսֆինքս. ձեր կարծիքը ի՞նչ է այդ մասին։

ԺԵՐՈՆԻՄՈ

Նախ և առաջ կը խնդրէի ձեզ մի բան ասել։

ԶԳԱՆԱՐԵԼ.

Ի՞նչ։

ԺԵՐՈՆԻՄՈ

Քանի՞ տարեկան կը լինիք դուք հիմա։

ԶԳԱՆԱՐԵԼ.

Ե՞ս։

ԺԵՐՈՆԻՄՈ

Այո՛։

ԶԳԱՆԱՐԵԼ.

Ճշմարիտն ասեմ, չգիտեմ. միայն թէ ես շատ առողջ եմ զգում ինձ։

ԺԵՐՈՆԻՄՈ

Ի՞նչպէս, մի՞թէ մօտաւորապէս անգամ չգիտէք ձեր տարիքը։

ԶԳԱՆԱՐԵԼ.

Ո՛չ, ո՞վ է մտածում այդ մասին։

ԺԵՐՈՆԻՄՈ

Լ՛Հ, ասացէք, խնդրեմ, քանի՞ տարեկան էիք երբ մենք ծանօթացանք միմեանց հետ։

ԶԳԱՆԱՐԵԼ.

Ճշմարիտն ասեմ, ես այն ժամանակ հազիւ քսան տարեկան էի։

ԺԵՐՈՆԻՄՈ

Քանի՞ տարի միասին մնացինք մենք Հռոմում։

ԶԳԱՆԱՐԵԼ.

Ութ տարի։

ԺԵՐՈՆԻՄՈ

Ո՞րքան ժամանակ մնացիք Անգղիայում։

ԶԳԱՆԱՐԵԼ.

Եօթը տարի։

ԺԵՐՈՆԻՄՈ

Իսկ Նորանից յետոյ՝ Հոլլանդիայում։

ԶԳԱՆԱՐԵԼ.

Հինգ ու կէս տարի։

ԺԵՐՈՆԻՄՈ

Քանի՞ տարի կը լինի որ վերադարձաք այստեղ։

ԶԳԱՆԱՐԵԼ.

Ես վերադարձայ յիսուն և երկու թուին։

ԺԵՐՈՆԻՄՈ

Յիսուն և երկուսից մինչև վաթսուն և չորսը այդ կ՛անէ տասն երկու տարի, կարծեմ. հինգ տարի ես Հոլլանդիայում, այդ արաւ տասնեօթը. եօթը տարի էլ Անգղիայում, այդ անում է քսան և չորս, ութն էլ Հռոմում անցկացրածը, եղաւ երեսուն և երկու տարի, քսանն էլ մինչև մեր ծանօթանալու օրը, այդ անում է ուղիղ յիսուն և երկու։ Ուրեմն, ինչպէս դուք խոստովանում էք, պ. Զգանարէլ, հիմա դուք պէտք է մօտ յիսուն երկու կամ յիսուն և երեք տարեկան լինիք։

ԶԳԱՆԱՐԵԼ.

Ո՞վ, ես. ո՛չ, այդ անկարելի է։

ԺԵՐՈՆԻՄՈ

Թողէք խնդրեմ . . . հաշիւը շատ ուղիղ է. և ես՝ իբրև բարեկամ, խոստովանումեմ ձեզ անկեղծորէն, ինչպէս պահանջեցիք, որ ամուսնութիւնը ձեր բանը չէ։ Այդ այնպիսի բան է, որի մասին երիտասարդներն անգամ երկար ու բարակ պէտք է մըտածեն. իսկ ձեր հասակի մարդիկը մտներովն անգամ չպէտք է անցկացնեն։ Եթէ ասած է, թէ գժութիւններից ամենամեծը ամուսնանալն է, ուրեմն, ես կարծումեմ թէ ամենայարմար բան կը լինէր այդ գժութիւնը այն հասակում անել, երբ մենք պէտք է առաւել խելացի լինինք։ Վերջապէս, ես ձեզ պարզն ասեմ, ամենևին խորհուրդ չեմ տալի ձեզ ամուսնութեան վրայ մտածելու և ես ձեզ աշխարհի ամենածիծաղելի մարդը կը համարէի, եթէ մինչև այսօր ազատ մնալով, հիմա կապէիք ձեզ ամենածանր շղթաներով։

ՋԳԱՆԱՐԵԼ

Իսկ ես ձեզ ասում եմ, որ վճռել եմ ամուսնանալ, և ոչինչ ծիծաղելի բան չեմ տեսնում ամուսնանալով իմ ընտրած աղջկայ հետ։

ԺԵՐՈՆԻՄՈ

Օ՛հ, այդ ուրիշ բան է, ուրեմն ինչու առաջուց չասացիք ինձ։

ՋԳԱՆԱՐԵԼ

Այդ աղջկանը ես հաւանում և սիրում եմ՝ ի բոլոր սրտէ։

ԺԵՐՈՆԻՄՈ

Սիրում էք նորան ի բոլոր սրտէ։

ՋԳԱՆԱՐԵԼ

Անկասկած, և ես արդէն խնդրել եմ նորա ձեռքը նորա հօրից։

ԺԵՐՈՆԻՄՈ

Խնդրել էք արդէն։

ՋԳԱՆԱՐԵԼ

Այո՛, և այս երեկոյեան պէտք է լինի մեր հարսանիքը, ես խօսք եմ տուել։

ԺԵՐՈՆԻՄՈ

Ուրեմն պսակուեցէք, ես այլ ես խօսք չունիմ։

ՋԳԱՆԱՐԵԼ

Ի՞նչ, հրաժարուի՞մ իմ դիտաւորութիւնից։ Դուք կարծումէք, պ. ժերոնիմո, թէ ես այլ ես ամուսնանալու ընդունակ չեմ. թողնենք մի կողմը իմ տարիքը և նայենք բանի զօրութեանը։ Ո՞ր երեսուն տարեկան մարդը այնպէս զուարթ ու ժիր կը լինի ինչպէս ինձ էք տեսնում. միթէ իմ բոլոր անդամները այնպէս առողջ չեն ինչպէս և առաջ. ով կ՚ասէ թէ ինձ հարկաւոր լինի կառքով կամ ոթոռի մէջ նստած մօտենալ վառարանին։ Տեղը չեն թէ (ցոյց է տալիս իւր ատամները։) ի՛նչ է իմ բոլոր ատամներս որոնց նմանը չկայ։ Օրը չորս անգամ ով է ուտում կերակուր ինձ նման զօչաղ կամ ով կարող է իմ ստամոքսիս նման առողջ ստամոքս ունենալ (Հաղումներ։) Հը՛, հը՛, հը՛, ի՞նչ կասէք։

ԺԵՐՈՆԻՄՈ

Ճշմարիտ է ձեր ասածը, ես սխալուել եմ, շատ լաւ կ՚անէք որ ամուսնանաք։

ԶԳԱՆԱՐԵԼ.

Առաջ ես ինքս ամուսնութեան հակառակ էի. բայց հիմա զգում եմ նորա անհրաժեշտութիւնը։ Բացի սիրուն կին ունենալու երջանկութիւնից, այնպիսի կին, որ հազար ու մէկ գգուանք ցոյց կը տայ ինձ, կը փայփայէ, կը փաթաթուի ինձ հոգնած ժամանակս։ Բացի այդ երջանկութիւնից, ասումեմ, ես այս տեսակ կեանք վարելով պէտք է անժառանգ թողնեմ իմ ցեղս. իսկ ամուսնանալով ինձանից յետոյ ինձ նման մէկին յիշատակ կը թողնեմ. Ի՞նչ բաւականութիւն կը լինի ինձ համար, երբ կը տեսնեմ ինձանից դուրս եկած փոքրիկ էակներ, իսկ և իսկ ինձ նման, որոնք կը վազվզեն տանս մէջ, առաջս կը գան տուն մտնելիս, հայրիկ ասելով, և հազարումէկ գժութիւններ կ'անեն. հէնց այժմ երևակայում եմ թէ այդպիսի դրութեան մէջ եմ գտնուում և շրջապատուած եմ երեք ջուխտ այդպիսի մանուկներով։

ԺԵՐՈՆԻՄՈ

Այո, դրանից զուարճալի բան չի լինիլ. և ես ձեզ խորհուրդ եմ տալիս որ որքան կարելի է շուտով պսակուիք։

ԶԳԱՆԱՐԵԼ.

Ուրեմն, ճշմարիտ, դուք ինձ խորհուրդ էք տալիս։

ԺԵՐՈՆԻՄՈ

Ցայտնի բան է. լաւ կ'անէք։

ԶԳԱՆԱՐԵԼ.

Ճշմարիտ, դուք ինձ ուրախացրիք ձեր բարեկամական խորհրդով։

ԺԵՐՈՆԻՄՈ

Եւ ով է այդ անձը, որի հետ կամենումէք ամուսնանալ։

ԶԳԱՆԱՐԵԼ.

Դորիմէն։

ԺԵՐՈՆԻՄՈ

Այն գեղեցիկ և միշտ զարդարուած Դորիմէ՞նը։

ԶԳԱՆԱՐԵԼ.

Այո՛։

ԺԵՐՈՆԻՄՈ

Պարոն Ալկանտորի աղջիկը։

ԶԳԱՆԱՐԵԼ.

Իսկ և իսկ։

ԺԵՐՈՆԻՄՈ

Եւ այն երիտասարդ Ալսիդասի քոյրը, որ ամեն մի բանում սիրում է սուր քաշել։

ԶԳԱՆԱՐԵԼ.

Նա ինքը։

ԺԵՐՈՆԻՄՈ

Ճշմարիտ։

ԶԳԱՆԱՐԵԼ.

Ի՞նչ կ'ասէք։

ԺԵՐՈՆԻՄՈ

Ինչու էք այլ ևս ուշացնում. պսակուեցէք շուտով։

ԶԳԱՆԱՐԵԼ.

Լաւ ընտրութիւն չեմ արել։

ԺԵՐՈՆԻՄՈ

Ա՛խ, ինչ հիանալի ամուսնութիւն կը լինի. շտապեցէք ուրեմն։

ԶԳԱՆԱՐԵԼ

Դուք կրկնապատկում էք իմ ուրախութիւնը։ Շնորհակալ եմ ձեր տուած խորհրդի համար և խնդրում եմ շնորհ բերէք այս երեկոյեան իմ հարսանիքիս։

ԺԵՐՈՆԻՄՈ

Անպատճառ, միայն ես դիմակով կը գամ աւելի լաւ պատուելու ձեր հարսանիքը։

ԶԳԱՆԱՐԵԼ

Յտեսութիւն,

ԺԵՐՈՆԻՄՈ, առանձին.

Տեսնել երիտասարդ օրիորդ Դորիմէնին, պ. Ալկանտորի աղջկանը, պսակուած պ. Զգանարէլի հետ . . . որ միայն յիսուն և երեք տարեկան է։ Ի՜նչ երևելի, երևելի՜ ամուսնութիւն . . . (Դուրս է գնում՝ կրկնելով մի քանի անգամ այս վերջին խօսքերը։)

ՏԵՍԻԼ Գ.

ԶԳԱՆԱՐԵԼ

Պէտք է որ երջանիկ ամուսնութիւն լինի, որովհետև ամէնքին ուրախութիւն է պատճառում, ամէնքին ծիծաղացնում է իմ պսակուելու լուրը։ Ի՞նչ երջանիկ մարդ եմ։

ՏԵՍԻԼ Դ.

ԴՈՐԻՄԷՆ, ԶԳԱՆԱՐԵԼ

ԴՈՐԻՄԷՆ, Թատրոնի խորքում՝ փոքրիկ ծառային, որ հետևում է նրան.

— Ա՛յ տղայ, շէյֆս լաւ բռնիր և հանաքներդ մի կողմը թող

ԶԳԱՆԱՐԵԼ, տեսնելով Դորիմէնին, առանձին.

Ահա, իմ սիրուհիս գալիս է. Ի՜նչ գեղեցիկ է։ Ի՜նչ տեսք և ի՜նչ հասակ ունի։ Մինթէ մարդ սորան տեսնելուց յետոյ չի ցանկանալ ամուսնանալ։ (Դորիմէնին.) Ո՞ւր ես գնում, իմ հրեշտակ, իմ գեղեցիկ ապագայ ամուսինս ապագայ ամուսնուդ.

ԴՈՐԻՄԷՆ

Մի քանի բաներ առնելու։

ԶԳԱՆԱՐԵԼ

Լաւ, սիրուհիս, շուտով մենք երկուսս էլ երջանիկ կը լինինք և դուք այլ ևս իրաւունք չէք ունենալ ինձ ոչինչ մերժելու։ Մէկ խօսքով, դուք գլխից մինչև ոտք իմս կը լինիք և ես լիակատար տէր կը լինեմ այդ սիրուն աչքերիդ, փոքրիկ շընորհալի քթիդ, այդ սիրուն շրթունքներիդ, սիրահարական ականջներիդ, փոքրիկ գեղեցիկ կզակիդ, այդ փոքրիկ կոլորակ կուրծքերիդ, այդ . . . Մի խօսքով դու իմս կը լինիս գլխիցդ մինչև ոտդ, և ես կը գգուեմ քեզ, ինչքան կ'ուզեմ. Ուրախ չէս, ասա, իմ հոգեակ, որ պիտի ամուսնանաս ինձ հետ։

ԴՈՐԻՄԷՆ

Շատ ուրախ եմ, շատ, երդվում եմ, որովհետև զզուեցայ մնալով իմ հօր խստութեան տակ։ Զուսնենալով ոչինչ ազատութիւն, հարիւր անգամ ցանկացել եմ որ ինձ շուտով մարդու տան, որ կարողանամ վերջապէս գործել, ինչ որ կամենում եմ, և փառք Աստուծոյ որ դուք վրայ հասաք. ես կ'աշխատեմ ձեռք բերել իմ կորցրած ժամանակս. և որովհետև դուք ճանաչումէք աշխարհս և ապրելու

ձևը գիտէք, յուսով եմ որ մենք շատ լաւ կ'ապրենք միասին։ Ցայտնի բան է, դուք այն ամուսիններից չէք լինիլ, որոնք ստիպում են իրանց կանանց չորս պատի մէջ ապրիլ։ Հաւատացնում եմ ձեզ որ ես կարող եմ տրաքուել այդպիսի կեանքից. միայնութիւնը անտանելի է ինձ համար։ Ես սիրում եմ խաղալ, այցելութիւններ անել, ընկերութիւնների մէջ գտնուիլ, ընծաներ ստանալ, շրջիլ. մէկ խօսքով, սիրում եմ ամեն տեսակ զուարճութիւններ և յայտնի բան է՝ դուք ձեզ բաղդաւոր կը համարիք որ ինձ նման կին կ'ունենաք։ Մենք, յայտնի բան է, երբէք չենք կռուիլ, եթէ ես չեմ խառնուիլ ձեր գործի մէջ, ինչպէս և դուք իմ գործիս մէջ։ Ես կարծեմ որ մենք պիտի պատուենք միմեանց, որովհետև ամուսնութեան մէջ երբէք հարկաւոր չէ բռնաբարել միմեանց։ Վերջապէս, մենք մեր ամուսնութեան մէջ կ'ապրենք իբրև երկու առանձին էակներ, որից ամէն մէկս կարող ենք ինքնագլուխ լինիլ և ոչինչ սիրոյ նախանձի տեղիք չտալ միմեանց. դուք պիտի հաւատաք իմ դէպի ձեզ ունեցած հաւատարմութեանը, ինչպէս և ես ձերինին։ Բայց ինչ պատահեցաւ, ի՞նչի է փոխվում ձեր երեսի գոյնը։

ԶԳԱՆԱՐԵԼ.

Ոչինչ, այսպէս գլուխս պտտուեցաւ։

ԴՈՐԻՄԻՆ

Հիմա շատերին է պատահում այդպէս. իսկ մեր ամուսնութիւնից յետոյ յուսով եմ որ այդպիսի բան չի պատահիլ ձեզ. ցտեսութիւն։ Ա՛խ, ի՞նչպէս ցանկանում եմ օրինաւոր հագուստներ ունենալ, որ դէն ձգեմ այս հագիս փալասները. իսկոյն կ'երթամ և կ'առնեմ բոլոր ինչ որ ինձ հարկաւոր է և կ'ուղարկեմ ձեզ մօտ որ փողը վճարէք։

ՏԵՍԻԼ Ե.

ԺԵՐՈՆԻՄՈ, ԶԳԱՆԱՐԵԼ.

ԺԵՐՈՆԻՄՈ

Ա՛խ, պարոն Զգանարել, շատ ուրախ եմ որ դարձեալ պատահեցայ ձեզ այստեղ։ Այս բոպէիս մի ոսկերիչ տեսայ, որ լսելով թէ դուք թանգագին անդամանդէ մատանի էք կամենում ընծայել ձեր ամուսնուն, խնդրեց ինձ ասեմ ձեզ որ դուք գնաք նորա մօտ և տեսնէք այն ակը, որի նմանը չէք ճարի։

ԶԳԱՆԱՐԵԼ.

Դեռ կը հասնեմ, չտապելու բան չկայ.

ԺԵՐՈՆԻՄՈ

Ի՞նչպէս, ի՞նչ է պատահել, ուր մնաց ձեր սաստիկ ցանկութիւնը։

ԶԳԱՆԱՐԵԼ.

Այս բոպէիս այնպիսի բան անցկացաւ մտքովս ամուսնութեան մասին, որ ես ուզումեմ առաջ փոքր ինչ լաւ մտածել և բացատրել այն երազը որ այս գիշեր տեսայ և որ իսկոյն միտքս ընկաւ։ Դուք գիտէք որ երազներն հայելու նման երբեմն բաց են անում մեր առաջ այն ինչ որ պատահելու է մեզ։ Երազումս տեսայ իբր թէ ես մէկ նաւի վերայ էի, սաստիկ փոթորկի ժամանակ, և իբր թէ . . .

ԺԵՐՈՆԻՄՈ

Ներեցէք, պարոն Զդանարէլ, որ ես մի քանի փոքրիկ գործերի պատճառաւ ժամանակ չունեմ ձեզ լսելու. երաշների մասին ես ոչինչ տեղեկութիւն չունիմ. իսկ զալով ձեր ամուսնութեանը, դուք կարող էք այդ մասին խորհուրդ հարցնել ձեր երկու հարեան փիլիսոփաներից, որոնք կարող են հարկաւոր տեղեկութիւնները տալ ձեզ, և որովհետև նոքա երկու զանազան ուղղութիւնների են պատկանում, կարող էք նոցա կարծիքներից որոշել թէ ինչ անէք. իսկ ե՛ս միենոյն մտքի եմ ինչ որ ձեզ ասացի առաջ. ուրեմն, ծառայութիւն։

ԶԳԱՆԱՐԷԼ, մենակ.

Ճշմարիտ է ասում. պէտք է խորհուրդ տեսնել նոցա հետ իմ անորոշ դրութեան մասին։

ՏԵՍԻ Զ.

ՊԱՆԿՐԱՍ, ԶԳԱՆԱՐԷԼ

ՊԱՆԿՐԱՍ, դէպի այն կողմը որտեղից Ներս մտաւ, և Զդանարէլին չնկատելով.

Չէ, պարոն, պէտք է ասեմ որ դուք չափից դուրս տգէտ էք. հարկաւոր է ձեզ աքսորել գրականութեան հանրապետութիւնից։

ԶԳԱՆԱՐԷԼ

Շատ յարմար միջոցին եկաւ։

ՊԱՆԿՐԱՍ, նոյնպէս Զդանարէլին չնշմարելով.

Այո՛, ես կը պաշտպանեմ իմ ասածը կենդանի ապացոյցներով, կապացուցանեմ քեզ Արիստոտելի, այդ փիլիսոփաների փիլիսոփայի միջոցով, ամէն տեսակ ձևերով ու եղանակներով, որ դու տգէտ

ես, ամենատգէտ, տգիտացեալ և տգիտացնող։

ԶԳԱՆԱՐԷԼ

Երևի կռուել է մէկի հետ. (Պանկրասին.) Պարոն։

ՊԱՆԿՐԱՍ, նոյնպէս Զդանարէլին չնշմարելով.

Դու համարձակում ես դատողութիւն տալ, երբ դատողութեան սկզբունքներն անգամ յայտնի չեն քեզ։

ԶԳԱՆԱՐԷԼ, առանձին.

Բարկութիւնից ինձ չէ նկատում։ (Պանկրասին.) Պարոն։

ՊԱՆԿՐԱՍ

Այդպիսի առաջարկութիւնը դատապարտելի է ամէն երկրի փիլիսոփայութեան օրէնքներով։

ԶԳԱՆԱՐԷԼ, առանձին.

Երևում է շատ են զայրացրել։ (Պանկրասին.) Ես . . .

ՊԱՆԿՐԱՍ, նոյնպէս Զդանարէլին չնշմարելով.

Toto coelo, totâ viâ aberras.

ԶԳԱՆԱՐԷԼ.

Պատիւ ունիմ համբուրելու պարոն դոկտորի ձեռքը։

ՊԱՆԿՐԱՍ

Ձեր խոնարհ ծառան։

ԶԳԱՆԱՐԷԼ.

Կարելի՞ է . . .

ՊԱՆԿՐԱՍ, դառնալով դէպի այն կողմը որտեղից Ներս մտաւ.

Գիտես արդեօք թէ ինչ գործեցիր. այդ մի in baIordo հաւաքաբանութիւն է։

ԶԳԱՆԱՐԷԼ.

Ես ձեզ . . .

ՊԱՆԿՐԱՍ, միևնոյն ձևով.

Առաջին նախադասութեան մէջ միտք չկայ, երկրորդը յանդուգն է. իսկ եզրակացութիւնը ծիծաղելի։

ՋԳԱՆԱՐԷԼ.

Ես . . .

ՊԱՆԿՐԱՍ, միևնոյն ձևով.

Լաւ է տրաքուիմ, քան քո ասածն ընդունեմ, և ես կը պաշտպանեմ իմ կարծիքը մինչև իմ թանաքի վերջին կաթիլը։

ՋԳԱՆԱՐԷԼ.

Կարող եմ արդեօք . . .

ՊԱՆԿՐԱՍ, միևնոյն ձևով.

Այո, ես կը պաշտպանեմ այս միտքը, pugnis et calcibus, unguibus et rostro.

ՋԳԱՆԱՐԷԼ.

Պարոն Արիստոտէլ, կարելի՞ է արդեօք իմանալ ձեր բարկութեան պատճառը։

ՊԱՆԿՐԱՍ

Ամենաիրաւացի պատճառ։

ՋԳԱՆԱՐԷԼ.

Այնու ամենայնիւ։

ՊԱՆԿՐԱՍ

Տգէտի մէկը կամենում էր ինձ համոզել մի ծուռ կարծիքի մէջ, սոսկալի, սարսափելի, զարշելի կարծիքի մէջ։

ՋԳԱՆԱՐԷԼ.

Կարող եմ արդեօք հարցնել թէ այդ ինչ կարծիք է։

ՊԱՆԿՐԱՍ

Ա՛խ, պարոն Զգանարէլ, ամէն բան տակն ու վերայ է եղել այսօր, և աշխարհս ընկել է ընդհանուր ապականութեան մէջ. ամէն տեղ թագաւորում է զարհուրելի յանդգնութիւն. և այն պաշտօնեաները՝ որոնց կոչումն է կարգը պահպանել, ամօթալից պիտի մեռնէին համբերելով այնպիսի աններելի գայթակղութիւնների, որոնց մասին ես կամենում եմ խօսիլ։

ՋԳԱՆԱՐԷԼ.

Ի՞նչ է պատահել։

ՊԱՆԿՐԱՍ

Ասացէք, խնդրեմ, միթէ զարհուրելի բան չէ, մի բան որ մինչև երկինք վրէժխնդրութիւն է կանչում, թոյլ տալ հրապարակաւ ասել գղակի ձեր։

ՋԳԱՆԱՐԷԼ.

Ի՞նչպէս։

ՊԱՆԿՐԱՍ

Ես համոզուած եմ որ պէտք է ասել գղակի կերպար և ոչ թէ գղակի ձեր, որովհետև մեծ զանազանութիւն կայ կերպարանքի և ձեի մէջ. ձեը բացայայտում է չնչաւոր մարմինների արտաքին գրութիւնը, իսկ կերպը անչունչ մարմինների արտաքին գրութիւնը. և որովհետև գղակը անչունչ մարմին է, ուրեմն պէտք է ասել գղակի կերպը և ոչ թէ ձեը։ (Պառնալով դարձեալ դէպի այն կողմը որտեղից եկել մնում.) Այո, տղէ՛ դու, այսպէս պէտք է ասել. որովհետև այսպէս է ասում և ինքը Արիստոտէլը իւր յաղագս յատկութեան գրքի մէջ։

ՋԳԱՆԱՐԷԼ, առանձին.

Կարծում էի թէ աշխարհը քանդուեցաւ։ (Պանկրասին.) Պարոն դոկտոր, թողէք այդ բոլորը ես . . .

ՊԱՆԿՐԱՍ

Այնպէս բարկացած եմ որ չգիտեմ թէ ինչ անեմ։

1106-3014 (50996/38)
ՀԱՄՀ-ՀՕՐԱ.

ԶԳԱՆԱՐԵԼ.

Մի կողմը դրէք ձեր ձեր և գդակը։ Ես բան ունիմ ձեզ հաղորդելու։ Ես . . .

ՊԱՆԿՐԱՍ

Լէրբ, անզգամ։

ԶԳԱՆԱՐԵԼ.

Ի սէր Աստուծոյ, հանգստացէք։ Ես . . .

ՊԱՆԿՐԱՍ

Տգէտ։

ԶԳԱՆԱՐԵԼ.

Ա՛խ, տէ՛ր իմ Աստուած. Ես . . .

ՊԱՆԿՐԱՍ

Համարձակիլ այդպիսի կարծիք պաշտպանել։

ԶԳԱՆԱՐԵԼ.

Նա սխալվում է։ Ես . . .

ՊԱՆԿՐԱՍ

Մի կարծիք որ Արիստոտէլը դատապարտեց է։

ԶԳԱՆԱՐԵԼ.

Շատ ճշմարիտ է. Ես . . .

ՊԱՆԿՐԱՍ

Բացարձակապէս դատապարտեց է։

ԶԳԱՆԱՐԵԼ.

Իրաւունք ունիք։ (Դառնալով դէպի այն կողմը որտեղից Պանկրասը ներս մտաւ.) Այո՛, ձեր յիմարութեանն ու լրբութեանը չափ չկայ, որովհետև դուք համարձակել էք վիճել այնպիսի մի դոկտորի հետ, որ գրել ու կարդալ գիտէ։ Պրծանք վերջապէս, խնդրեմ ականջ դնէք ինձ։ Ես կամենումեմ ձեզանից խորհուրդ հարցնել մի գործի մասին, որ ինձ

դժուարացնում է։ Ես դիտաւորութիւն ունիմ մի կին առնել, որ բաժանէ ինձ հետ ամուսնական կեանքի լուծը։ Այդ կինը սիրուն է և գեղեցկակազմ. նա ինձ շատ է դուր գալիս. և նա ևս շատ ուրախ է ինձ հետ ամուսնանալու. հայրն էլ համաձայն է։ Միայն փոքր ինչ վախենում եմ որ մի գուցէ անբաղդ լինիմ. և դորա համար դիմում եմ ձեզ, իբրև փիլիսոփայի, որ յայտնէք ինձ ձեր կարծիքը. ի՞նչ կ՚ասէք։

ՊԱՆԿՐԱՍ

Աւելի շուտ կը համաձայնիմ որ datur vacuum in rerum natura, և թէ ես անասուն եմ, քան թէ համաձայնիմ ասել դգակի ձեր։

ԶԳԱՆԱՐԵԼ, *առանձին.*

Գրո՛ղը տանի քեզ։ (Պանկրասին.) Դէ՛, բաւական է, պարոն դոկտոր, լսեցէք փոքր ինչ ուրիշների ասածը։ Այս մի ամբողջ ժամ է, որ ես ձեզ հետ խօսում եմ, իսկ դուք չէք կամենում պատասխանել։

ՊԱՆԿՐԱՍ

Ներեցէք խնդրեմ, միտքս զբաղուած է արդար քարկութեամբ։

ԶԳԱՆԱՐԵԼ.

Թողէ՛ք ձեր բարկութիւնը, և բարեհաճեցէք լսել ինձ։

ՊԱՆԿՐԱՍ

Շատ լաւ, ինչ էք կամենում ասել ինձ։

ԶԳԱՆԱՐԵԼ.

Ես կամենումեմ ձեզ հետ մի բանի վերայ խօսել։

ՊԱՆԿՐԱՍ

Եւ ի՞նչ լեզուով էք կամենում յայտնել ինձ ձեր միտքը։

ԶԳԱՆԱՐԵԼ

Ի՞նչ լեզուով . . .

ՊԱՆԿՐԱՍ

Այո՛։

ԶԳԱՆԱՐԵԼ

Յայտնի բան է իմ բերանիս մէջի լեզուովը. կարծեմ չեմ դնալ հարեւանիս լեզուն փոխ ուզելու։

ՊԱՆԿՐԱՍ

Ես ձեզ ասումեմ ի՞նչ բարբառով, որ ազգի լեզուով։

ԶԳԱՆԱՐԵԼ

Այդ ուրիշ բան է։

ՊԱՆԿՐԱՍ

Կը կամենաք Իտալերէն խօսել։

ԶԳԱՆԱՐԵԼ

Ո՛չ։

ՊԱՆԿՐԱՍ

Իսպաներէն։

ԶԳԱՆԱՐԵԼ

Ո՛չ։

ՊԱՆԿՐԱՍ

Գերմաներէն։

ԶԳԱՆԱՐԵԼ

Ո՛չ։

ՊԱՆԿՐԱՍ

Անգլիերէն։

ԶԳԱՆԱՐԵԼ

Ո՛չ։

ՊԱՆԿՐԱՍ

Լատիներէ՞ն։

ԶԳԱՆԱՐԵԼ

Ո՛չ։

ՊԱՆԿՐԱՍ

Յունարէ՞ն։

ԶԳԱՆԱՐԵԼ

Ո՛չ։

ՊԱՆԿՐԱՍ

Եբրայեցերէ՞ն։

ԶԳԱՆԱՐԵԼ

Ո՛չ։

ՊԱՆԿՐԱՍ

Ասորերէ՞ն։

ԶԳԱՆԱՐԵԼ

Ո՛չ։

ՊԱՆԿՐԱՍ

Տաճկերէ՞ն։

ԶԳԱՆԱՐԵԼ

Ո՛չ։

ՊԱՆԿՐԱՍ

Արաբերէ՞ն։

ԶԳԱՆԱՐԵԼ

Ո՛չ, ո՛չ, Ֆրանսերէն, Ֆրանսերէն, Ֆրանսերէն։

ՊԱՆԿՐԱՍ

Ա՜, Ֆրանսերէն։

ԶԳԱՆԱՐԵԼ

Այո՛ Ֆրանսերէն։

ՊԱՆԿՐԱՍ

Ուրեմն միւս կողմն անցէք, որովհետև այս ականջս նշանակուած է գիտնական և օտարազգի

լեզուների համար. իսկ միւսը մայրենի գռեհիկ լեզուի համար.

ԶԳԱՆԱՐԻԼ, առանձին.

Ինչքան ծէսեր են հարկաւոր եղել այս տեսակ մարդկանց հետ խօսելու համար։

ՊԱՆԿՐԱՍ

Ի՞նչ էք կամենում։

ԶԳԱՆԱՐԻԼ

Ես ուզում եմ խորհուրդ հարցնել ձեզ մի գործի մասին, որ փոքր ինչ դժուարացնում է ինձ։

ՊԱՆԿՐԱՍ

Ա՛, ա՛, անշուշտ մի դժուար փիլիսոփայական խնդիր է։

ԶԳԱՆԱՐԻԼ

Ներեցէք . . . ես . . .

ՊԱՆԿՐԱՍ

Գուցէ դուք ցանկանում էք գիտենալ թէ էակի վերաբերմամբ գոյութիւնը և պատահմունքը համանի՞շ թէ տարբեր հասկացողութիւններ են։

ԶԳԱՆԱՐԻԼ

Բնաւ ո՛չ. ես . . .

ՊԱՆԿՐԱՍ

Թէ տրամաբանութիւնը արուեստ է թէ գիտութիւն։

ԶԳԱՆԱՐԻԼ

Այդ չէ։ Ես . . .

ՊԱՆԿՐԱՍ

Թէ նա բաղկանում է մտքի երեք գործողութիւններից, թէ միայն մէկից.

ԶԳԱՆԱՐԻԼ

Ո՛չ։ Ես . . .

ՊԱՆԿՐԱՍ

Թէ արդեօք տնսը դասակարգութիւն կայ, թէ մէկը միայն։

ԶԳԱՆԱՐԻԼ

Ո՛չ, ամենևին։ Ես . . .

ՊԱՆԿՐԱՍ

Թէ եզրակացութիւնը առաջ է գալի հաւաքականութիւնից։

ԶԳԱՆԱՐԻԼ

Ո՛չ։ Ես . . .

ՊԱՆԿՐԱՍ

Թէ բարութեան էութիւնը պարունակվում է ցանկութեան թէ պատշաճաւորութեան մէջ։

ԶԳԱՆԱՐԻԼ

Ո՛չ։ Ես . . .

ՊԱՆԿՐԱՍ

Թէ մարդուս երջանկութիւնը նորա վախճանի՞ց է կախուած։

ԶԳԱՆԱՐԻԼ

Ա՛խ, ո՛չ։ Ես . . .

ՊԱՆԿՐԱՍ

Թէ վախճանը կարող է ազդել մարդու վրայ իւր իրական գոյութեամբ, թէ իւր դիտեալ գոյութեամբ։

ԶԳԱՆԱՐԻԼ

Ո՛չ, ո՛չ. ո՛չ, ո՛չ, ո՛չ, հազար անգամ ո՛չ։

ՊԱՆԿՐԱՍ

Ուրեմն բացատրեցէք ձեր միտքը, որովհետև ես չգիտեմ, թէ ինչ էք ուզում ասել։

ԶԳԱՆԱՐԵԼ.

Ուզում եմ բացատրել, բայց դուք ինձ չէք լսում։ (Մենք Զգանարելը ասում։) Բանը նորանումն է որ ես ուզումեմ պատկերել մի երիտասարդ և գեղեցիկ աղջկայ հետ։ Ես նորան սատիկ սիրում եմ և նորա հետ էլ խոսել եմ, բայց երկիւղ եմ կրում . . .

ՊԱՆԿՐԱՍ, ասում։ վերեցոյն ժամանակ, առանց Զգանարելի առածը լսելու.

Խոսքը տուած է մարդուն իւր մտքերը արտայայտելու համար. և ինչպէս որ մտքերը իրերի պատկերներ են, այսպէս և մեր խոսքերը մեր մտքերի պատկերներն են։ (Զգանարելը նարահատուած փակում։ ձեռքով Պանկրասի բերանը, որ խոսքն շարունակում։ ձեռքը վերցնելուց յետոյ.) Բայց այդ պատկերները ուրիշ պատկերներից նորանով են զանազանվում, որ ուրիշ պատկերները ամէն տեղ որսվում են իրանց նախանկարներից. այն ինչ խոսքը պարունակում իւր մէջ իւր նախապատկերը, որովհետև նա ոչ այլ ինչ է՝ եթէ ոչ արտաքին նշանով արտայայտուած միտք. սարանից առաջ է գալիս այն որ ով որ լաւ է մտածում, նա և լաւ խոսում է։ Որեմն բացայայտեցէք ինձ ձեր միտքը խոսքի միջոցով, որ ամէն նշաններից աւելի հասկանալի է։

ԶԳԱՆԱՐԵԼ. ցոյց տում։ Պանկրասին իւր առանը և փակում։ նրանց վրայ.

Անիծուի քո մարդութիւնը։

ՊԱՆԿՐԱՍ, իւր տան միջից.

Այո՛, խոսքն է animi index et speculum. Դա մարդուս սրտի թարգմանն է. նորա հոգու կերպարանքն է։ (Բարձրանալով պատուհանից։) Դա այնպիսի մի հայելի է որի մէջ երևում են մարդուս ամենածածուկ խորհուրդները, և որովհետև դուք կարողութիւն ունիք մտածելու և միևնոյն ժամանակ ձեր միտքը յայտնելու, ուրեմն ինչի համար օգուտ չէք քաղում խոսելու կարողութիւնից ձեր միտքը ինձ հասկացնելու համար։

ԶԳԱՆԱՐԵԼ.

Շատ աշխատեցայ, բայց չկամեցաք ինձ լսել։

ՊԱՆԿՐԱՍ

Լսումեմ, խոսեցէք։

ԶԳԱՆԱՐԵԼ.

Ես ասումեմ. պարան վարպետ, որ . . .

ՊԱՆԿՐԱՍ

Միայն կարճ բռնեցէք։

ԶԳԱՆԱՐԵԼ.

Կ՚աշխատեմ։

ՊԱՆԿՐԱՍ

Զգուշացէք աւելորդաբանութիւնից։

ԶԳԱՆԱՐԵԼ.

Բայց պար . . .

ՊԱՆԿՐԱՍ

Ձեր ասելիքն ասացէք ճարտար լակոնաբանութեամբ։

ԶԳԱՆԱՐԵԼ.

Ես ձեզ . . .

ՊԱՆԿՐԱՍ

Առանց պատիպատ ընկնելու, առանց խնդրից հեռանալու։

ԶԳԱՆԱՐԵԼ, նեղանալով որ չէ կարող խոսել, քարը է հաւաքում Պանկրասի գլխին խփելու։

ՊԱՆԿՐԱՍ

Ի՞նչպէս, փոխանակ ձեր միտքը բացատրելու, դուք բարկանում էք, ինչպէս տեսնում եմ, դուք աւելի յանդուգն էք այն պարոնից որ կամենում էր հաստատել, թէ կարելի է ասել գղակի ձենը, և ես կ'ապացուցանեմ, երբ որ կամենաք, ստոյգ համոզիչ պատճառաբանութիւններով և ապացոյցներով in barbara, որ դուք ոչ այլ ինչ էք եթէ ոչ մի անասուն, իսկ ես եղել եմ և կը լինիմ միշտ in utroque jure դոկտոր Պանկրաս . . .

ԶԳԱՆԱՐԵԼ.

Ի՞նչ անիծած շատախօսն է։

ՊԱՆԿՐԱՍ, ըմմ դուրս գալով.

Գրագէտ և ուսումնական ոմն . . .

ԶԳԱՆԱՐԵԼ.

Դարձեալ։

ՊԱՆԿՐԱՍ

Կարող և ընդունակ մարդ, (Հեռանալով.) տեղեակ ամէն տեսակ բնական, բարոյական և քաղաքական

գիտութիւնների. (Դառնալով.) գետնական, ամենագիտնական, per omnes modos et casus. (Հեռանալով.) մի մարդ որ գերաղանց կերպով հմուտ է առասպելաբանութեանը և պատմութեանը. (Դառնալով.) քերականութեանը, բանաստեղծութեանը, ճարտարաբանութեանը, տրամաբանութեանը և սոփեստութեանը. (Հեռանալով.) մաթեմատիկային, թուաբանութեանը, տեսաբանութեանը, երազագիտութեանը, ֆիզիքային և մետաֆիզիքային. (Դառնալով.) երկրաչափութեանը, գծագրութեանը, ճարտարապետութեանը. (Հեռանալով.) բժշկականութեանը, աստղաբաչխութեանը, աստեղագիտութեանը, դիմագիտութեանը, ճակատագիտութեանը, ձեռնահմայութեան, գետնահարցութեան և այլն։

ՏԵՍԻԼ Է.

ԶԳԱՆԱՐԵԼ, մենակ.

Անիծեալ լինին ձեր գիտնականները, որ չեն կամենում մարդու լսել։ Ճշմարիտն ասացին ինձ որ դորա ուսուցիչ Արիստոտէլը շատախօսներից մէկն է եղել։— Պէտք է գնամ այն միւսին տեսնեմ, կարելի է նա դորանից ծանր ու խոհական լինի։ Է՜հ։

ՏԵՍԻԼ Ը.

ՄԱՐՖՈՒՐԻՈՍ, ԶԳԱՆԱՐԵԼ

ՄԱՐՖՈՒՐԻՈՍ

Ի՞նչ էք կամենում ինձանից, պարոն Զգանարել։

ԶԳԱՆԱՐԵԼ.

Պարոն վարպետ, ես կարօտ եմ ձեր խորհրդին մի փոքրիկ գործի համար. և հէնց այդ բանի համար եկայ այստեղ։ (Առանձին.) Բանը լաւ է գնում, սա մարդու խօսք լսում է։

ՄԱՐՖՈՒՐԻՈՍ

Պարոն Զգանարել, թողէ՛ք խնդրեմ այդ խօսակցութեան ձևը։ Մեր փիլիսոփայութիւնը արգելում է յայտնել մի որ և իցէ միտք վճռական ձևով, այլ այլ նա կամենում է որ ամեն բանի վրայ կասկածական կերպով խօսենք և միշտ ընդհատենք մեր դատողութիւնը. այս պատճառով դուք չպէտք է ասէք «ես եկայ» այլ «ինձ թվում է թէ ես եկայ»։

ԶԳԱՆԱՐԵԼ.

Ինձ թվում է։

ՄԱՐՖՈՒՐԻՈՍ

Այո՛։

ԶԳԱՆԱՐԵԼ.

Ի՛նչ խօսք, 'ի հարկէ ինձ այդպէս պէտք է թուի, որովհետև այդ այդպէս է։

ՄԱՐՖՈՒՐԻՈՍ

Այդ ոչինչ մի հետևանք է. կարող է ձեզ այնպէս թուել, բայց կարող է և ճիշտ չլինել։

ԶԳԱՆԱՐԵԼ.

Ի՞նչպէս, ուրեմն ճիշտ չէ որ ես եկել եմ։

ՄԱՐՖՈՒՐԻՈՍ

Ո՞ գիտէ, ամէն բանում մենք պէտք է կասկածինք։

ԶԳԱՆԱՐԵԼ.

Ի՞նչպէս. ես կանգնած չեմ այստեղ, և դուք ինձ հետ չէք խօսում։

ՄԱՐՖՈՒՐԻՈՍ

Ինձ թվում է թէ դուք այստեղ կանգնած էք, և կարծում եմ թէ ես ձեզ հետ խօսում եմ, բայց ըստոյգ չէ թէ այդ այդպէս է։

ԶԳԱՆԱՐԵԼ.

Մեղայ քեզ. տէր Աստուած, դուք իմ վերայ ծիծաղում էք։ Չէ՞ որ այդ դուք էք այդտեղ կանգնած, և ես այստեղ. էլ ինչ կարծելու բան կայ այդտեղ։ Թողնենք այդ նուրբ խօսակցութիւնը, խնդրեմ, և խօսենք իմ գործի մասին։ Ես եկայ ձեզ յայտնելու որ ցանկանում եմ պսակուիլ։

ՄԱՐՖՈՒՐԻՈՍ

Չգիտեմ։

ԶԳԱՆԱՐԵԼ.

Ես ձեզ ասումեմ։

ՄԱՐՖՈՒՐԻՈՍ

Կարելի է։

ԶԳԱՆԱՐԵԼ.

Իմ ամուսնացուն շատ մատաղահաս և գեղեցիկ է։

ՄԱՐՖՈՒՐԻՈՍ

Անկարելի բան չէ։

ԶԳԱՆԱՐԵԼ.

Լաւ կ'անեմ թէ վատ, եթէ պսակուիմ.

ՄԱՐՖՈՒՐԻՈՍ

Կամ լաւ կը լինի կամ վատ։

ԶԳԱՆԱՐԵԼ., առանձին.

Հա, հա, սա էլ իր էշն է քշում։ (Մարփուրլո-

սեն.) Ես ձեզ հարցնում եմ, թէ լաւ կ'անեմ ե-թէ ամուսնանամ ասած աղջկաս հետ։

ՄԱՐՖՈՒՐԻՈՍ

Բանը գիտէ։

ԶԳԱՆԱՐԵԼ

Վատ կ'անեմ։

ՄԱՐՖՈՒՐԻՈՍ

Պատահմունքիցն է կախուած։

ԶԳԱՆԱՐԵԼ

Ի սէր Աստուծոյ, պատասխանեցէք ինձ ինչպէս հարկն է։

ՄԱՐՖՈՒՐԻՈՍ

Ես այդպէս եմ կարծում։

ԶԳԱՆԱՐԵԼ

Այդ աղջիկը սիրաս գրաւել է։

ՄԱՐՖՈՒՐԻՈՍ

Կարելի է։

ԶԳԱՆԱՐԵԼ

Հայրը համաձայն է տալ ինձ նորան։

ՄԱՐՖՈՒՐԻՈՍ

Կարող է պատահիլ։

ԶԳԱՆԱՐԵԼ

Դուք ի՞նչ էք կարծում։

ՄԱՐՖՈՒՐԻՈՍ

Անկարելի ոչինչ չկայ։

ԶԳԱՆԱՐԵԼ

Բայց դուք իմ տեղս ի՞նչ կ'անէիք։

ՄԱՐՖՈՒՐԻՈՍ

Չգիտեմ։

ԶԳԱՆԱՐԵԼ

Ի՞նչ խորհուրդ էք տալիս ինձ անելու։

ՄԱՐՖՈՒՐԻՈՍ

Ինչ որ կամենաք։

ԶԳԱՆԱՐԵԼ

Ես կատաղում եմ։

ՄԱՐՖՈՒՐԻՈՍ

Ես լուանում եմ իմ ձեռներս։

ԶԳԱՆԱՐԵԼ

Սատանան տանի քեզ, յիմար ծերունի։

ՄԱՐՖՈՒՐԻՈՍ

Ինչ որ լինելու է կը լինի։

ԶԳԱՆԱՐԵԼ

Անպիտան մարդ։ Ես իսկոյն փոխել կը տամ քո խօսելու ձևը, կատաղած փիլիսոփայ։ (Խփում է Մարֆուրիոսին երեսը վայրում։)

ՄԱՐՖՈՒՐԻՈՍ

ԱՀ, աՀ, աՀ։

ԶԳԱՆԱՐԵԼ

Այ քեզ վարձ քո յիմարաբանութեան համար, իսկ ինձ բաւականութիւն։

ՄԱՐՖՈՒՐԻՈՍ

Ի՞նչպէս, այդ ի՞նչ յանդգնութիւն է։ այդպէ՞ս անպատուել ինձ։ Դու համարձակում ես ինձպէս մի փիլիսոփայի ծեծել։

ԶԳԱՆԱՐԵԼ

Ուղղեցէք, խնդրեմ, ձեր խօսելու ձևը։ Պէտք է կասկածիլ ամէն բանի վրայ և դուք չպէտք է ասէք թէ ես ձեզ ծեծեցի, այլ թէ ձեզ թվում է թէ ես ձեզ ծեծեցի։

ՄԱՐՖՈՒՐԻՈՍ

Ես կ'երթամ, կը դանդատիմ այս թաղի ոստիկանին՝ ստացած հարուածներիս համար։

ԶԳԱՆԱՐԼԻ.

Ես լուանում եմ ձեռներս։

ՄԱՐՖՈՒՐԻՈՍ

Նշանները երևում են մարմնիս վերայ։

ԶԳԱՆԱՐԼԻ.

Կարող է պատահիլ։

ՄԱՐՖՈՒՐԻՈՍ

Դու ես իմ ծեծողը։

ԶԳԱՆԱՐԼԻ.

Անկարելի ոչինչ չկայ։

ՄԱՐՖՈՒՐԻՈՍ

Բանտարկել կը տամ քեզ։

ԶԳԱՆԱՐԼԻ.

Ես ոչինչ չգիտեմ։

ՄԱՐՖՈՒՐԻՈՍ

Եւ քեզ կը դատապարտեն դատարանում։

ԶԳԱՆԱՐԼԻ.

Ինչ որ պատահելու է կը պատահի։

ՄԱՐՖՈՒՐԻՈՍ

Ես քեզ ցոյց կը տամ։

ՏԵՍԻԼ Թ.

ԶԳԱՆԱՐԼԻ. մենակ.

Զարմանալի՜ բան, մի դրական խօսք անգամ չը կարողացայ դուրս քաշել այդ շուն մարդուց, և այժմ այնքան տարակուսանքի մէջ եմ ինչպէս և այս խօսակցութիւնից առաջ։ Ի՞նչ պէտք է անեմ ես, որ չգիտեմ թէ ինչ հետևանքներ կ՚ունենայ իմ ամուսնութիւնը։ Ոչ ոք այսպիսի ծանր դրութեան

մէջ չէ գտնուել երբէք։ Բայց ահա գնչու կանայք պէտք է սոցա գուշակել տալ իմ ապագան։

ՏԵՍԻԼ Ժ.

Երկու գնչու կանայք դահլեան ձեռներին մտնում են երգելով և պարելով։

ԶԳԱՆԱՐԼԻ.

Ի՞նչ ուրախ են։ Լսեցէ՛ք, ինչ եմ ասում։ Կարող էք արդեօք գուշակել իմ բաղդը։

Ա. ԳՆՉՈՒ

Այո՛, բարի պարոն, երկուսս էլ կը գուշակենք։

Բ. ԳՆՉՈՒ

Բաւական է միայն որ մեկնես մեզ քո ձեռքը մէջին խաչ դրած, և մենք իսկոյն մի բարի գուշակութիւն կ՚անենք քեզ համար։

ԶԳԱՆԱՐԼԻ.

Ահա իմ երկու ձեռքս ձեր պահանջածով։

Ա. ԳՆՉՈՒ

Դու շատ լաւ կերպարանք, իմ բարի պարոն, շատ լաւ կերպարանք։

Բ. ԳՆՉՈՒ

Այո՛, լաւ կերպարանք, այնպիսի մարդու կերպարանք, որից մի օր մի բան դուրս կը գայ։

Ա. ԳՆՉՈՒ

Քիչ ժամանակից յետոյ կ՚ամուսնանաս, իմ բարի պարոն. քիչ ժամանակից յետոյ կ՚ամուսնանաս։

Բ. ԳՆՉՈՒ

Դու կը պակուես մի շնորհալի կնոջ հետ, մի շնորհալի կնոջ հետ։

Ա. ԳՆԶՈՒ

Այո՛, այնպիսի կնոջ հետ, որին ամէնքը կը սիրեն։

Բ. ԳՆԶՈՒ

Այնպիսի կնոջ հետ, որ քեզ համար շատ բարեկամներ կը ճարէ, իմ բարի պարոն, շատ բարեկամներ կը ճարէ։

Ա. ԳՆԶՈՒ

Այնպիսի կնոջ հետ, որ առատութիւն կը բերէ քո տունը։

Բ. ԳՆԶՈՒ

Այնպիսի կնոջ հետ, որ կը մեծացնէ քո համբաւը։

Ա. ԳՆԶՈՒ

Նա կը յարգէ քեզ, իմ բարի պարոն, կը յարգէ քեզ։

ԶԳԱՆԱՐԷԼ

Այդ բոլորը լաւ է։ Բայց ասացէ՛ք, խնդրեմ, ան չկայ, որ նա ինձ կը խաբէ։

Բ. ԳՆԶՈՒ

Խաբէ՞։

ԶԳԱՆԱՐԷԼ

Այո՛։

Ա. ԳՆԶՈՒ

Խաբէ՞։

ԶԳԱՆԱՐԷԼ

Այո՛, ան չկայ որ նա ինձ կը խաբէ։

Երկու գնչուները պարում են և երգում։

ԶԳԱՆԱՐԷԼ

Սատանան տանի։ Այդ պատասխան չէ իմ հարցին։ Այստեղ եկէ՛ք. երկուսիդ էլ հարցնում եմ, արդեօք ան չկայ որ նա ինձ կը խաբէ։

Բ. ԳՆԶՈՒ

Խաբէ՞, ձե՞զ։

ԶԳԱՆԱՐԷԼ

Այո՛, արդեօք ինձ կը խաբէ՞։

Ա. ԳՆԶՈՒ

Ձեզ, խաբէ՞։

ԶԳԱՆԱՐԷԼ

Այո՛, թէ ո՛չ։

Երկու գնչուները դուրս են գնում երգելով և պարելով։

ՏԵՍԻԼ ԺԱ.

ԶԳԱՆԱՐԷԼ, մենակ.

Գրողը տանի լրբերին, որ ինձ անհանգստութեան մէջ են թողնում։ Չէ, պէտք է անպատճառ իմանամ իմ ամուսնութեան վիճակը. ես կերթամ կը գտնեմ այն երևելի կախարդին, որի վրայ այնքան խօսում են ու գովում, և որ իւր հրաշալի արհեստով ցոյց է տալի ամէնին իւր ցանկացածը։ Բայց էլ ինչի՞ գնամ կախարդի մօտ, երբ սա կարող է ցոյց տալ ինձ իմ բոլոր ուզածը։

ՏԵՍԻԼ ԺԲ.

ԴՈՐԻՄԷՆ, ԼԻԿԱՍՏ, ԶԳԱՆԱՐԷԼ, որը ամանձնանում է բեմի մի անկիւնում։

ԼԻԿԱՍՏ

Ի՛նչ, գեղեցիկ Դորիմէն, ճշմարիտ հանաք չէք անում։

ԴՈՐԻՄԷՆ

Ինչ հանաքի բան կայ։

ԼԻԿԱՍ

Եւ դուք պիտի պսակուիք։

ԴՈՐԻՄԷՆ

Անպատճառ։

ԼԻԿԱՍ

Եւ այս գիշեր է ձեր հարսանիքը։

ԴՈՐԻՄԷՆ

Այս գիշեր։

ԼԻԿԱՍ

Անգութ աղջիկ, և այդպէս շուտով մոռացաք դուք իմ սէրս դէպի ձեզ, մոռացանք ձեր ինձ տուած խոստմունքները։

ԴՈՐԻՄԷՆ

Ե՞ս, երբէք։ Ես ձեզ վրայ առաջուան պէս լաւ կարծիք ունիմ, ուստի և այս ամուսնութիւնը չը պէտք է անհանգիստ անէ ձեզ։ Ես այդ մարդու հետ սիրով չեմ ամուսնանում, այլ նորան ուզում եմ միայն իւր հարստութեան համար։ Ես կարողութիւն չունիմ, դուք էլ նոյնպէս, և դուք գիտէք թէ առաց փողի դժուար է ապրիլ աշխարհիս երեսին. ուրեմն ինչ ճանապարհով կ'ուզէ լինի, պէտք է աշխատել փող ձեռք բերել։ Ես այս հանգամանքից օգուտ քաղեցի լաւ կեանքի հասնելու համար, և ես այս քայլն արի այն յուսով որ շուտով կ'ազատուիմ իմ ուզած ալևորից։ Նորա կեանքը հաղիւ թէ վեց ամիս քաշէ, նա շուտով կը մեռնի հաւատացնում եմ ձեզ, և ես շուտով երջանիկ որբևայրի կին կը լինիմ։ (Տեսնելով Զգանարելին.) Ա՛խ, մենք ձեզ վերայ էինք խօսում իսկոյն և յայտնի բան է ձեր գովասանքն էինք անում։

ԼԻԿԱՍ

Ա՞յս է այն պարոնը։

ԴՈՐԻՄԷՆ

Այո՛, սա իմ մարդագուն է։

ԼԻԿԱՍ

Թո՛յլ տուէք ինձ, պարոն, շնորհաւորել ձեզ ձեր ամուսնութիւնը և միևնոյն ժամանակ առաջարկել ձեզ իմ ամենախոնարհ ծառայութիւնները. հաւատացնում եմ ձեզ որ շատ աղնիւ աղջկայ էք պատահել։ Եւ դուք, օրիորդ, ես ուրախ եմ ձեզ հետ ձեր յաջող ընտրութեան համար. դորանից լաւը գտնել չէիք կարող։ Պարոնի դէմքից երևում է որ շատ լաւ ամուսին կարող է լինել։ Այո՛, պարոն, ես ցանկանում եմ ձեզ հետ բարեկամանալ, միմեանց մօտ յաճախ երթևեկութիւն անել և միասին ժամանակ անցկացնել։

ԴՈՐԻՄԷՆ

Մեծ պատիւ էք անում մեզ երկուսիս։ Բայց զընանք, ուշանում եմ, մենք ժամանակ կ'ունենանք դեռ այդ բանի վերայ խօսելու։

ՏԵՍԻԼ ԺԳ.

ԶԳԱՆԱՐԷԼ, մենակ.

Արի՛ ու պսակուի. կարծեմ վատ չի լինի գնամ խօսքս յետ առնեմ։ Սատանան տանի փողը. լաւ է կորչի մսխած փողս քան թէ աւելի վատ բանի հանդիպիմ։ Աշխատենք մէկ կերպով ազատուել այս գործից։ Է՛յ։ (Նա խփում Ալեքսանդրի դուռը։)

ՏԵՍԻԼ Ժ.

ԱԼԿԱՆՏՈՐ, ԶԳԱՆԱՐԵԼ

ԱԼԿԱՆՏՈՐ

Ա՛հ, սիրելի փեսաս, համեցէ՛ք։

ԶԳԱՆԱՐԵԼ

Ծառայ եմ, պարոն։

ԱԼԿԱՆՏՈՐ

Գալի՞ս էք պսակուելու։

ԶԳԱՆԱՐԵԼ

Ներեցէ՛ք ինձ։

ԱԼԿԱՆՏՈՐ

Հաւատացնում եմ ձեզ, որ ես էլ ձեզպէս անհամբեր եմ։

ԶԳԱՆԱՐԵԼ

Չէ, պարոն, ես ուրիշ բանի համար եմ եկել։

ԱԼԿԱՆՏՈՐ

Ես արդէն ամէն հարկաւոր պատուէրները տուի այդ հանդիսի համար։

ԶԳԱՆԱՐԵԼ

Իմ գալը դորա համար չէ։

ԱԼԿԱՆՏՈՐ

Երաժիշտները պատրաստ են, խնջոյքը ապսպրած է, և աղջիկս պատրաստ է ձեզ ընդունելու։

ԶԳԱՆԱՐԵԼ

Ես այդ բանի համար չեմ եկել։

ԱԼԿԱՆՏՈՐ

Մէկ խօսքով դուք գոհ կը լինիք. էլ ոչինչ չէ կարող խանգարել ձեր բաղդաւորութիւնը։

ԶԳԱՆԱՐԵԼ

Թողէ՛ք, խնդրեմ, ես ուրիշ բան եմ խօսում։

ԱԼԿԱՆՏՈՐ

Ցուն համեցէք ուրեմն, սիրելի փեսաս։

ԶԳԱՆԱՐԵԼ

Բան եմ ասում։

ԱԼԿԱՆՏՈՐ

Ինչ բանի ժամանակ է, համեցէ՛ք, խնդրեմ։

ԶԳԱՆԱՐԵԼ

Սպասեցէ՛ք, հարկաւոր խօսք ունիմ։

ԱԼԿԱՆՏՈՐ

Հարկաւոր խօսք ունիք, ասումէ՞ք։

ԶԳԱՆԱՐԵԼ

Այո՛։

ԱԼԿԱՆՏՈՐ

Ի՞նչ է։

ԶԳԱՆԱՐԵԼ

Պարոն Ալկանտոր, ես խնդրեցի ձեր աղջկայ ձեռքը, այդ ճշմարիտ է, և դուք ինձ խոստացաք. բայց հիմա ես տեսնում եմ որ իմ տարիքս յարմար չեն նորա համար, և մենք չենք կարող բաղդաւոր լինել։

ԱԼԿԱՆՏՈՐ

Ընդհակառակը, իմ աղջիկս ձեզ հաւանում է և ես հաւատացած եմ որ նա ձեզ հետ բաղդաւոր կը լինի։

ԶԳԱՆԱՐԵԼ

Չէ, ես երբեմն այնպիսի այլանդակ սովորութիւններ ունիմ, որ նա կարող է չարչարուիլ իմ ձեռքին։

ԱԼԿԱՆՏՈՐ

Սխալվում էք, իմ աղջիկը շատ ներողամիտ է, նա բոլորովին կը յարմարուի ձեր բնութեանը։

ԶԳԱՆԱՐԵԼ

Ես մի քանի մարմնաւոր պակասութիւններ ունիմ, որոնցից նա կարող է զզուիլ։

ԱԼԿԱՆՏՈՐ

Դատարկ բան է։ Լաւ կինը երբէք չէ կարող զզուիլ իւր ամուսնուց։

ԶԳԱՆԱՐԵԼ

Վերջապէս կ'ուզէք ճշմարիտն ասեմ. ես ձեզ խորհուրդ չեմ տալիս որ դուք տաք ինձ ձեր աղջիկը։

ԱԼԿԱՆՏՈՐ

Ինչպէս երևում է, դուք ինձ վատ էք ճանաչել։ Շուտով ես ինձ կըսպանեմ քան թէ յետ կը կանգնեմ իմ տուած խօսքից։

ԶԳԱՆԱՐԵԼ

Միամիտ կացէք, ես արձակում եմ ձեզ ձեր խոստմունքից, և ես . . .

ԱԼԿԱՆՏՈՐ

Ո՛չ, ես ձեզ խոստացել եմ նորան և չնայելով միւս բոլոր ուզողներին՝ նա ձերը կը լինի։

ԶԳԱՆԱՐԵԼ, *առանձին.*

Ի՞նչ պատիժ է։

ԱԼԿԱՆՏՈՐ

Տեսնում էք, ես ձեզ այնքան յարգում ու սիրում եմ, որ եթէ մի իշխան ուզէր իմ աղջկան, ես նորան կը մերժէի և ձեզ կըտայի։

ԶԳԱՆԱՐԵԼ

Պարոն Ալկանտոր, շատ շնորհակալ եմ ձեզ ինձ ցոյց տուած պատուի համար. միայն ես յայտնում եմ ձեզ, որ ես կնիկ ուզելու ցանկութիւն չունիմ։

ԱԼԿԱՆՏՈՐ

Ո՞վ, դուք։

ԶԳԱՆԱՐԵԼ

Այո՛, ես։

ԱԼԿԱՆՏՈՐ

Պատճառը։

ԶԳԱՆԱՐԵԼ

Պատճառն այն է որ ես ինձ անյարմար եմ համարում ամուսնութեան համար, և կամենում եմ այդ բանում իմ հօրս և միւս ազգականներիս հետևիլ, որոնք երբէք չեն կամեցել ամուսնանալ։

ԱԼԿԱՆՏՈՐ

Լսեցէ՛ք։ Ամէն մարդ ազատ է գործելու ինչ որ կամի, և ես ոչ ոքին ստիպել չեմ կարող, միայն դուք խոստացաք ինձ պակուելու իմ աղջկանս հետ, և ես արդէն բոլոր պատրաստութիւնները տեսել եմ, բայց որովհետև դուք այժմ հրաժարվում էք ձեր խօսքից, տեսնենք թէ ինչ կը լինի։ Շուտով ես ձեզ իմ կամքը կը յայտնեմ։ (Դուրս է գնում։)

ՏԵՍԻԼ Ժ Ե

ԶԳԱՆԱՐԵԼ

Ես չէի կարծում թէ այսպէս հեշտ կը պրծնեմ սորա ձեռքից։ Ճշմարիտ, երբ որ մտածում եմ, տեսնում եմ որ լաւ եմ արել այդ գործից յետ կանգնելով, եթէ ոչ, դուցէ երկար ժամանակ փոշմանելու բան կ'ունենայի։ Բայց ահա որդին պատասխան է բերում ինձ։

ՏԵՍԻԼ Ժ.

ԱԼՍԻԴԱՍ, ԶԳԱՆԱՐԷԼ

ԱԼՍԻԴԱՍ, *քաղցրութեամբ.*

Պարոն, ես ձեր խոնարհ ծառան եմ։

ԶԳԱՆԱՐԷԼ.

Ծառայ եմ և ես, պարոն։

ԱԼՍԻԴԱՍ, *մշտ մեղմոյն ձևով.*

Իմ հայրս յայտնեց ինձ, պարոն, որ դուք հրաժարվում էք ձեր տուած խօսքից։

ԶԳԱՆԱՐԷԼ.

Այո՛, պարոն։ Շատ եմ ցաւում, բայց . . .

ԱԼՍԻԴԱՍ

Բան չկայ, պարոն։

ԶԳԱՆԱՐԷԼ.

Շատ նեղանում եմ, պարոն, հաւատացնում եմ ձեզ. ես կը ցանկայի . . .

ԱԼՍԻԴԱՍ

Ոչինչ, մի՛ նեղանաք։ (*Առաջարկելով Զգանարէլին երկու սուր.*) Բարեհաճեցէք, պարոն, այս երկու սրերից մէկն ընտրել։

ԶԳԱՆԱՐԷԼ.

Այս երկու սրերի՞ց։

ԱԼՍԻԴԱՍ

Այո՛։

ԶԳԱՆԱՐԷԼ.

Եւ ինչի՞ համար։

ԱԼՍԻԴԱՍ

Պարոն, որովհետև ձեր տուած խօսքից յետոյ մերժում էք իմ քրոջ հետ ամուսնանալու, ուրեմն և իմ առաջարկութիւնը չէ կարող զարմացնել ձեզ։

ԶԳԱՆԱՐԷԼ.

Ի՞նչպէս։

ԱԼՍԻԴԱՍ

Ուրիշները իմ տեղս աւելի մեծ աղմուկ կը բարձրացնէին և կը զայրանային ձեր դէմ. բայց մենք բանը քաղցրութեամբ կը վերջացնենք, և ես ձեզ յայտնում եմ քաղաքավարութեամբ, որ մենք պէտք է միմեանց սպանենք եթէ կը բարեհաճէք։

ԶԳԱՆԱՐԷԼ.

Լա՛ւ քաղաքավարութիւն է։

ԱԼՍԻԴԱՍ

Դէ՛ պարոն, ընտրեցէ՛ք խնդրեմ։

ԶԳԱՆԱՐԷԼ.

Թողէք ձեր հանաքները, խնդրեմ. ես ամենևին մեռնելու կամք չունիմ։ (*Առանձին.*) Այդ ի՞նչ տեսակ է խօսում։

ԱԼՍԻԴԱՍ

Ուրիշ ելք չկայ, պարոն։

ԶԳԱՆԱՐԷԼ.

Թողէ՛ք, խնդրեմ, այդ խօսքերը, պարոն։

ԱԼՍԻԴԱՍ

Շուտ արէք, պարոն։ Ես մի փոքր գործ ունիմ և շտապում եմ։

ԶԳԱՆԱՐԷԼ.

Ձեմ կամենում, ասում եմ ձեզ։

ԱԼՍԻԴԱՍ

Չէ՞ք կամենում մենամարտիլ.

ԶԳԱՆԱՐԷԼ.

Չէ՛, ասում եմ ձեզ։

ԱԼՍԻԴԱՍ

Ճշմարիտ։

ԶԳԱՆԱՐԷԼ.

Ճշմարիտ։

ԱԼՍԻԴԱՍ, մի քանի հարուածներ տալով նորան փայտով.

Գոնեա, պարոն, ոչինչ գանգատի տեղիք չէք ունենայ. որովհետև ես կարդը պահպանում եմ. դուք հրաժարվում էք ձեր խօսքից, ես ձեզ առաջարկում եմ մենամարտութիւն, դուք մերժում էք, և ես ձեզ փայտի հարուածներ եմ տալիս. այս բոլորը ընդունուած է, և դուք այնքան ազնիւ մարդ էք որ իմ վարմունքը օրինաւոր կը գտնէք։

ԶԳԱՆԱՐԷԼ, առանձին.

Այս ի՞նչ փուչն է եղել։

ԱԼՍԻԴԱՍ, առաջարկելով դարձեալ երկու սրերը.

Հրամայեցէ՛ք, պարոն, ազնիւ մարդու պէս վարուեցէք. և մի՛ թոյլ տաք որ ձեր ականջը կտրեմ։

ԶԳԱՆԱՐԷԼ.

Դարձեալ։

ԱԼՍԻԴԱՍ

Պարոն, ես ոչ ոքի ստիպել չգիտեմ. բայց դուք պէտք է կամ մենամարտիք կամ քրոջս հետ պըսակուիք։

ԶԳԱՆԱՐԷԼ

Պարոն, հաւատացնում եմ որ ոչ մէկը կատարելու ցանկութիւն չունիմ.

ԱԼՍԻԴԱՍ

Հաստատ։

ԶԳԱՆԱՐԷԼ.

Հաստատ։

ԱԼՍԻԴԱՍ

Ուրեմն թոյլ տուէք . . . (Դարձեալ փայտի հարուածները է տալիս նորան։)

ԶԳԱՆԱՐԷԼ.

Վա՜յ, վա՜յ, վա՜յ։

ԱԼՍԻԴԱՍ

Պարոն, ես շատ ցաւում եմ որ ստիպուած եմ այսպէս վարուիլ ձեզ հետ, բայց պէտք է շարունակեմ, մինչև խոստանաք կամ ինձ հետ մենամարտիլ, կամ քրոջս հետ պսակուիլ։ (Բարձրացնում է փայտը։)

ԶԳԱՆԱՐԷԼ.

Լաւ է, լաւ է, կը պսակուիմ։

ԱԼՍԻԴԱՍ

Ա՛խ, շատ ուրախ եմ, պարոն, որ խելքի եկաք, և բանը քաղցրութեամբ է վերջանում. որովհետև ես ձեզ շատ եմ յարգում, և հաւատացնում եմ որ մեծ ցաւ կը լինէր ինձ համար, եթէ ստիպէիք ինձ վատ վարուիլ ձեզ հետ։ Ուրեմն ես կը կանչեմ հօրս և կը յայտնեմ նորան որ ամէն բան վերջացաւ։ (Նենգումն Ալիանտորի դուռը։)

ՏԵՍԻԼ ԺԷ.

ԱԼԿԱՆՏՈՐ, ԴՈՐԻՄԷՆ, ԱԼՍԻԴԱՍ, ԶԳԱՆԱՐԷԼ

ԱԼՍԻԴԱՍ

Հայր, պարոնը խելքի եկաւ. նա համաձայնեցաւ քաղցրութեամբ վերջացնել բանը, և դուք կարող էք տալ նորան իմ քրոջը։

ԱԼԿԱՆՏՈՐ

Ահա, պարոն, սորա ձեռքը, տուէք և դուք ձերը։ Աստուած շնորհաւոր արասցէ։ Ես ազատ եմ և այսուհետև յանձնում եմ սորան ձեր հովանաւորութեանը. գնանք տօնենք այս երջանիկ ամուսնութիւնը։

ԱՋԴ

Մենք թէպէտ խոստացել էինք սոյն հատուածների տպագրութեան համար նուիրուած գումարի որքանութեան և գործադրութեան հաշիւը առաջին գրքոյկներից մէկի հետ հրատարակել, բայց ստորագրող պարոններից ոմանք դեռ վճարած չլինելով՝ հարկ համարեցինք սպասել մինչև նոցանից ևս ստանանք և ապա հրատարակենք հաշիւը. ուստի խնդրում ենք դեռ չվճարող պարոններից բարեհաճել ուղարկել իւրեանց ստորագրած գումարները։

Ահաւասիկ նուիրատու պարոնների ցուցակը.

ՓիՔոյեան եւ ընկ.
Ա. Թահիրեան
Յ. Ղօրղանեան
Ա. Ղօրղանեան
Ա. ՄանՔաշեան
Յ. ՉիՔախեան
Գ. Արծրունի
Յ. Իզմիրեան
Ա. Ծովեանեան
Մ. Շահպասրոնեան
Ս. Ամիրեան
Ս. Տէր Մկրտչեան
Ն. Մինրիմանեան
Մ. Կարագէօզեան
Թ. ՔայանՔարեան
Ե. Դաւիդեան
Գ. Նիկողոսեան
Կ. Կամսարական
Լ. Տիգրանեան
Գ. Ենիկոլոպեան
Ն. Տէր Յակոբեան
Ս. Արծրունի
Հ. Էնֆիաճեան
Ա. Բաբայեան
Ոմն
Ա. Մելիք-Փաշայեան
Ալիսազեան
Բժ. Մելիքեան
Յ. Խանջեան
Ա. Մատինեան
Լ. ԲէհրուՔեան
Մ. Դօլուխանեան
Ոմն
Ոմն
Ա. Անանեան
Եղբարք Ջանջուղազեան
Իշխ. Ն. ԲէհրուՔեան
Ա. Լ. Թահիրեան
Յ. Թահիրեան
ՄուՔաՔեան
Օ. Մելիք Բեղլարեան
Ռոտինեան
Մ. Քէփինեան
Յ. Թամամշեան
Ա. Ռոտինեան

024

Պարտք ենք համարում մեզ՝ հրապարակաւ շնորհակալութիւն յայտնել սոյն Պարոններին, և նոցա օժանդակութեամբ տպուած իւրաքանչիւր գրքոյկից ևս մի մի օրինակ նուէր ուղարկել նոցա։

ԻՇԽ. Մ. ԲԻՔԲՈՒԹԵԱՆ։

1a

Հայաստանի Ազգային գրադարան
NL0431307